ALSO HOME HEALTH CARE, INC.

224 E. OLIVE AVE., BURBANK, CA 91502
Tel.# (818) 352-2244 Fax# (818) 352-9977



Services we provide:

- Skilled Nursing
- Physical Therapy
- Occupational Therapy
- Speech Therapy
- Social Services
- Home Health Aide

Welcome to
Also Home Health Care, Inc.

Your nurses:_____

Frequency:_____

Your Therapists:_____

Frequency:_____

Your Aides:_____

Frequency:_____

Your Social Worker_____

Other:_____

CONFIDENTIAL
FOR PATIENT & STAFF ONLY

ALLERGIES

_____

_____

Ոչ մեկանգամյա դիմակ օգտագործելիս.

- Ոչ մեկանգամյա կտորե դիմակների համար, ինչպիսիք են տանը պատրաստված դիմակները, CDC-ն խորհուրդ է տալիս պարբերաբար լվալ դիմակները՝ կախված օգտագործման հաճախականությունից: Լվացքի մեքենան պետք է բավարար լինի կտորե դիմակը պատշաճ կերպով լվանալու համար:

- Անձնական պաշտպանիչ պարագաները հեռացնելիս նախ հանե՛ք և աղբը նետե՛ք ձեռնոցները: Հետո անմիջապես ձեռքերը լվացե՛ք օճառով և ջրով կամ ալկոհոլի հիմքով ախտահանիչներով: : Հաջորդիվ, հանե՛ք կտորե դիմակը, հետևեք լվանալու ցուցումներին (տե՛ս «Լվացքը մանրակրկիտ լվացե՛ք» բաժինը) և անմիջապես ձեռքերը կրկին լվացե՛ք օճառով և ջրով կամ ալկոհոլի հիմքով ախտահանիչով:

Պատշաճ կերպով կրե՛ք դիմակները: Տնային կտորե դիմակները պետք է.



- Կիպ բայց հարմարավետ նստեն դեմքին
- Ամրանան կապերով կամ ականջի օղակներով
- Ներառեն գործվածքների մի քանի շերտ, եթե այն կտորե դիմակ է
- Թույլ տան շնչել առանց խանգարելու
- Եթե կտորե դիմակ է, ինարավորություն ունենա լվացվելու լվացքի մեքենայով առանց վնասվելու կամ ձևափոխվելու:

ՔՈՎԻԴ-19-ը կանխարգելելու համար դիմակներ օգտագործելու և դրանք պատրաստելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/downloads/DIY-cloth-face-covering-instructions.pdf

Խուսափե՛ք կենցաղային իրերը հիվանդի հետ կիսելուց: Չի՛ կարելի օգտագործել նույն ափսեները, բաժակները, սպասքի պարագաները, սրբիչները, անկողնային և այլ պարագաները: Երբ հիվանդը օգտագործում է այդ պարագաները, մանրակրկիտ լվացե՛ք դրանք (տե՛ս «Լվացքը մանրակրկիտ լվացե՛ք» բաժինը):

Source: Centers for Disease Control and Prevention, National Center for Immunization and Respiratory Diseases (NCIRD), Division of Viral Diseases. Information as of 4/08/2020.
https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prepare/prevention.html

Ամեն օր մաքրե՛ք հպման բոլոր մակերեսները, ինչպիսիք են դարակները, սեղանները, դռների բռնակները, լոգարանի հարմարանքները, զուգարանակոնքերը, հեռախոսները, ստեղնաշարերը, պլանշետները և ննջասենյակի սեղանիկները: Նաև մաքրե՛ք ցանկացած մակերես, որի վրա կարող է լինել արյուն, կղանք կամ մարմնի արտազատած հեղուկներ:

Օգտագործե՛ք կենցաղային մաքրող սփրեյ կամ սրբիչ՝ ըստ պիտակի ցուցումների: Պիտակները պարունակում են ցուցումներ, թե ինչպես անվտանգ և արդյունավետ օգտագործել մաքրող միջոցները, ներառյալ այն նախազգուշական միջոցները, որոնք պետք է ձեռնարկել ապրանքը օգտագործելիս, օրինակ՝ ձեռնոցներ կրել և համոզվել, որ արտադրանքի օգտագործման ընթացքում լավ օդափոխություն եք ապահովել:

ՎԱՐՍԿԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Լվացքը մանրակրկիտ լվացե՛ք:

- Անմիջապես հանե՛ք և լվացե՛ք այն հագուստը կամ անկողնային պարագաները, որոնք ունեն արյան, կղանքի կամ մարմնի արտազատած հեղուկների հետքեր
- Կեղտոտված իրերի հետ գործ ունենալիս կրե՛ք մեկանգամյա ձեռնոցներ և հեռու պահե՛ք աղտոտված իրերը ձեր մարմնից: Ձեռքերը անմիջապես լվացե՛ք (օճառով և ջրով կամ ալկոհոլի հիմքով ախտահանիչով) ձեռնոցները հանելուց հետո:
- Կարդացե՛ք և հետևե՛ք հագուստի և լվացող միջոցների պիտակների վրա գրված ցուցումներին: Հիմնականում օգտագործե՛ք սովորական լվացքի հեղուկներ, հետևե՛ք լվացքի մեքենայի ցուցումներին և մանրակրկտորեն չորացրեք հագուստը՝ օգտագործելով հագուստի պիտակի վրա նշված ամենաբարձր ջերմաստիճանը:

Տեղադրե՛ք բոլոր օգտագործված մեկանգամյա դիմակները և այլ կեղտոտ իրերը առանձին տարայի մեջ և ապա նոր գցե՛ք կենցաղային այլ թափոնների մեջ: Լվացե՛ք ձեռքերը (օճառով և ջրով կամ ալկոհոլի հիմքով ախտահանիչով) այդ իրերը ձեռք տալուց անմիջապես հետո: Օճառը և ջուրը պետք է նախընտրել, երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են:

Քննարկե՛ք ցանկացած լրացուցիչ հարց ձեր պետական կամ տեղական առողջապահության վարչության կամ բուժհաստատության հետ: Ստուգե՛ք, թե որ ժամերին է ձեր տեղական առողջապահական վարչությունը հասանելի:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/hcp/guidance-prevent-spread.html

Source: Centers for Disease Control and Prevention, National Center for Immunization and Respiratory Diseases (NCIRD), Division of Viral Diseases. Information as of 4/08/2020.
https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prepare/prevention.html